

ԲԱՆԱՎԵՃ, ՆՎԻՐՎԱԾ ԺՈՂՈՎՐԻԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ  
ՊԼԱՏԻՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻՆ

Վերջերս Մոսկվայում տեղի ունեցավ բանա-  
լուսություն, պատմականության պրոբլեմներին  
նվիրված գիտական կոնֆերանս, որը կազմա-  
կերպել էին ՍՍՄԽ գիտությունների ակադեմիա-  
յի գրականության ու լեզվի բաժանմունքին կից  
բանահյուսության գծով գիտական խորհուրդը  
և ուս գրականության ինստիտուտը (Պուշկին-  
յան տունը)։

Գիտական կոնֆերանսին մասնակցում էին  
Մոսկվայի, Լենինգրադի, միութենական հան-  
րապետությունների ֆուկլորիստները, պատմա-  
բաններ, ազգագրագետներ և հումանիտար գի-  
տությունների այլ մասնագետներ։

Կոնֆերանսը ներածական խոսքով բացեց  
դրականության և լեզվի բաժանմունքի բանա-  
հյուսության գծով գիտական խորհրդի նախա-  
գահ, ՍՍՄԽ ԳԱ թղթակից-անդամ Վ. Գ. Բա-  
ղանովը։ Իր ներածական խոսքում Վ. Գ. Բա-  
ղանովը մատնանշեց ֆուկլորի պատմականու-  
թյան պրոբլեմների գիտական լուսարանության  
ստացիաներում պատմական ու բանասիրական  
գիտությունների (պատմագրություն, հնագի-  
տություն, ազգագրություն, բանագիտություն,  
գրականագիտություն, լեզվագիտություն, ար-  
վեստագիտություն և այլն) համատեղ ջանքե-  
րով կոմպլեքսային հետազոտության անհրա-  
ժեշտությունը։ Այնուհետև Վ. Գ. Բաղանովը  
անդրադարձավ սույն գիտական կոնֆերանսի  
պատմության դրդապատճառներին։ Դեռևս 1961  
թ. ապրիլի 5-րդ և 6-րդ համարներում հանգես  
եկավ մի ընդարձակ հոդվածով՝ «Պատմական  
հայացք ռուսական բիլինաների վերաբերյալ»,  
որի շուրջը մամուլում ծավալվեց գիտական  
բանավեճ։ Ակադեմիկոս Բ. Ա. Ռիբակովի տե-  
սակետների դեմ հանդես եկավ բանասիրական  
գիտությունների ղեկավար-պրոֆեսոր Վ. Յա-  
րոսլավը։

Մամուլում ծավալված բանավեճը շարունակ-  
վեց գիտական կոնֆերանսում, որտեղ հիմնա-  
կան զեկուցումներով հանդես եկան ղեկավար-  
պրոֆեսոր Վ. Յա. Պրոսլավը և ակադեմիկոս Բ.  
Ռիբակովը։

Իրենք օր տեղի գիտական այդ բանավեճին  
մասնակցեցին ավելի քան 25 գիտնականներ։

Գիտական կոնֆերանսը արժարժեց լազմաթիվ  
հարցեր ու խնդիրներ, որոնք կենսական նշա-  
նակություն ունեն ժամանակակից բանագիտու-  
թյան համար։ Որոշում կայացվեց գիտական  
այս կոնֆերանսի նյութերը հրապարակել ա-  
ռանձին ժողովածուում, որն անշուշտ ուրախու-  
թյամբ կընդունվի մասնագետների կողմից։  
Ռուսական միջնադարի պատմության խոշորա-  
գույն մասնագետ Բ. Ա. Ռիբակովը լուրջ հե-  
տազոտություն է կատարել։

Իր զեկուցման սկզբում ակադ. Ռիբակովը  
դիտողության կարգով նշեց, որ, ցավոք սրտի,  
սեփականում է նկատվում բանահյուսական և  
պատմագիտական հետազոտությունների մեջ  
կիսանյութի բանասերներին այդ ներքի չը-  
սաց Բ. Ա. Ռիբակովը, — ապա այժմ, երբ  
պատմական գիտությունը, հնագիտությունը,  
ազգագրությունը հայտնագործություններ են  
կատարում, բանագետները պարտավոր են հաշ-  
վի առնել դրանք։ Մասնավորապես խոսելով  
դիցարանական ֆուկլորի մասին, նա շատ կա-  
րևոր է համարում էնեոլիթյան կոսմոգոնիայի և  
բրոնզի դարի զարդանախշերի ու այլ տվյալ-  
ների օգտագործման անհրաժեշտությունը։ Ա-  
ռաջ է քաշվում նաև բանահյուսության դիցա-  
բանական նյութերի կարևորությունը հնագե-  
տների համար։ Ակադ. Ռիբակովը կոնկրետ օրի-  
նակներ է բերում, թե ինչպես վերջին շրջանի  
պեղումները հաստատում են բիլինային էպոսի  
տվյալները այսպես կոչված գյուղացիական  
բաղաճների մասին։

Էպոսի և մասնավորապես բիլինային էպոսի  
պատմական ուսումնասիրությունը նորություն  
չէ բանագիտության համար։ Ակադ. Ռիբակովը  
գիտահատում, արժեքավորում է պատմական  
դպրոցի ներկայացուցիչների կատարած աշխա-  
տանքը, բայց և միաժամանակ քննադատում է  
նրանց սահմանափակությունը՝ բիլինային էպո-  
սը արիստոկրատական համարելու հարցերում։  
Ակադ. Ռիբակովը պաշտպանում է ակադեմի-  
կոս Դրեկովի այն թեզը, թե «բիլինան» — դա  
պատմությունն է, վերարտադրված հենց իրեն  
ժողովրդի կողմից։

Նշելով այդ բոլորից ակադ. Ռիբակովը իր  
ուսումնասիրության մեջ խնդիր է դնում պար-

գել՝ բիլինանների ծագման ժամանակը, նրանց պատմական հավաստիության աստիճանը, նրանց երևան գալու և անկման պատճառները:

Ակադ. Ռիբակովը հետազոտելով ուսումնական բիլինային էպոսի հարուստ ժառանգությունը, այն բաժանում է ցիկլերի և կազմում բիլինային սյուժեների ժամանակագրական աշխարհը՝ նա զուգադրում է բիլինային սյուժետը բարեգրքների հաղորդած տեղեկությունների հետ և ելնելով անունների, հարակից հանգամանքների, աշխարհագրական պայմանների, էպիզոդների բովանդակության նմանությունից, բոլոր այդ դեպքերում էլ ժամանակաշրջանը:

Այդ եղանակով Բ. Ա. Ռիբակովը Վոլգայի և Միկուլա Սելյանինովիչի մասին բիլինան կապում է Դրեվյան երկրի իշխան Օլեգ Սվյատոսլավիչի հետ (X դ.), Շարակունի մասին բիլինան՝ 1068 թ. Կիևյան ապստամբության հետ և այլն: Բիլինային սյուժեների ժամանակագրական ցիկլեր կազմելով Բ. Ա. Ռիբակովը լեզուանուր բիլինային էպոսը բաժանում է երեք խմբերի՝

ա. Ցեղային ասրեր (մ. թ. ա. I հազարամյակից մինչև մ. թ. VI—VII դդ.):

բ. Բիլինաներ (IX դարից մինչև XIII դար):

գ. Պատմական երգեր (XIII—XV դարեր):

Տարեգրությունների և պատմական այլ աղբյուրների զուգադրմամբ, ակադ. Ռիբակովը բիլինային էպոսի մեջ վերծանում և հավաստում է 30 պատմական դեմքերի գոյությունը: Այդպիսով փր հետազոտությանը ակադ. Ռիբակովը ցույց է տալիս, որ բիլինային էպոսի Կիևյան Ռուսիայի ժամանակաշրջանն է (975—1240 թթ.), իսկ հիմնական բովանդակությունը՝ պարբեր պեչենեգների, պոլովցիների և թաթարների դեմ:

Իր գեկուցման սկզբում պրոֆ. Պրոպյար անդրադարձավ հումանիտար և ճշգրիտ գիտությունների բաժանման խնդրին: Ամենակարևոր պրոպյարն էր բանագիտության մեջ պրոֆ. Պրոպյար համարում է իրականության և գեղարվեստական հնարանի փոխհարաբերության հարցը: Պրոպյարը կարևոր է հատկապես էպոսի համար: Հին պատմական դպրոցը հեշտ մանապարհով է լուծել այդ հարցը՝ ջնջելով գեղարվեստական հնարանի մոմենտը: Եռա համար էլ ուսումնասիրության ոլորտից դուրս են մնացել առասպելները, հերթաթները, երգերը և սուրբ Բիլինայում միայն փնտրում էին պատմական նախատիպեր, դեպքեր, բիլինային աշխարհագրությունը տեղափոխում էին բարեկր:

Պրոֆ. Պրոպյար հայտնում է, որ ռչի կարելի չէ տեղ պատմական փաստերի, իրողությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Պատմարանն այդ լավ կանի, բան ֆոլկլորիստը, բազմաանոթ լինելով նյութերին, Բալդ պետր է պատմարանն էլ լավ իմանա և ըմբռնի ֆոլկլորի յուրահատկությունները: Էպոսի պատմականությունը, վերջիվերջո, որոշվում է ոչ թե պատմական փաստերով և իրողություններով (որոնք կարող են և բացակայել կամ ներմուծվել հետագայում), այլ սյուժետի իմաստի ու բովանդակության պատմականությամբ: Մովետական գիտնականներն ուսումնասիրում են ոչ միայն իրականության անմիջական արտացոլումը, այլև նրա գեղարվեստական բեկումը: Մեզ համար պատմական են ոչ միայն սեռականներն ու փաստերը, պատմական է նաև գեղարվեստական հնարանը որպես այդպիսին: Մենք ուզում ենք պատմականորեն ուսումնասիրել էպոսն բոլոր լուծյան, և ոչ թե միայն պատմական ունալ իրողությունների առկայության և նրանց լուծյան տեսակետից: Հետևաբար, եզրակացնում է պրոֆ. Պրոպյար, — էպոսի հարաբերությունը պատմությանը տարրեր է՝ տարրեր էպոսաներում, տարրեր ժողովուրդների մոտ: Պատմականության լուծյան փոխվում է պատմության հետ: Հարցն ավելի բարդ է, բան թվում է առաջին հայացքից:

Անդրադառնալով ակադ. Ռիբակովի հետազոտությանը, պրոֆ. Պրոպյար բարձր է գնահատում գիտնականի էրուդիցիան և առանձին փաստերի ու դեպքերի խոր ու ճշմարտացի վերլուծությունը:

Սակայն պրոֆ. Պրոպյար չի համաձայնում ակադ. Ռիբակովի ելակետին, կոնցեպցիային: Ակադ. Ռիբակովը անտեսում է ֆոլկլորի յուրահատկությունը և մոռացության մատնելով գեղարվեստական հնարանի մոմենտը բիլինայում, բանահյուսության նյութերին նայում է որպես գրավոր տարեգրության աղբյուրների, կամայական զուգադրություններով կառուցում տեսակետներ, որոնք հակասում են իրականությանը: Այդ տեսակետից պրոֆ. Պրոպյար առարկում է ակադ. Ռիբակովի բիլինային սյուժեների ցիկլային ժամանակագրական բաժանմանը: Անհիմն է համարում նաև ուսումնական բիլինային էպոսի ստեղծումը կոնկրետ՝ X—XIII դարերի մեջ սահմանափակելու Պրոֆ. Պրոպյար պնդում է, որ բիլինայում արտացոլում են գրտել Կիևյան Ռուսիայի պատմության գանազան դեպքերը, թաթարների արշավանքը, բայց պնդում է, որ էպոսը ձևավորվել է ավելի վաղ: Սրելյան սլավոնների մոտ ավելի շուտ էր սկսվել էպոսի ձևավորման պրոցեսը: Վերջում Պրոպյար հիշում է բիլինային էպոսի ուսումնասիրության մեթոդի մասին: Նա գտնում է, որ էպոսի նյութերից պետք է գնալ դեպի պատմությունը և ոչ թե հակառակը: Հետադարձ:



թյան տվյալ ընադավառում գիտական ճիշտ մեթոդը ինդուկտիվ մեթոդն է։

Դիսկուսիային մասնակցեցին մի շարք գիտնականներ, որոնք հետաքրքրական և կարևոր պիտոզություններ արեցին տարրեր հարցերի վերաբերյալ։ ՍՍՌԽ-ի թղթակից-անդամ Վ. Ժիրմոսկին (Մոսկվա) մատնանշեց այն հանգամանքը, որ ամեն մի էպոս պետք է ուսումնասիրել տվյալ ժողովրդի պատմության հիման վրա և օրինակներ բերեց միջինասիական ժողովուրդների էպիկական ստեղծագործություններից («Ալլալամիշ», «Մանաս», «Թոխտամիշ»), ցույց տալով, թե ինչպես են զուգորդված պատմական փաստերն ու գեղարվեստական հնարանքը։

Խոսելով բանավոր ավանդների մասին, Վ. Ժիրմոսկին նշեց, որ դա սովորական վերարտադրում չէ և ճիշտ համարեց Վ. Պրոպպի կարծիքը ֆոլկլորի յուրահատկության և բանահյուսական ստեղծագործության մեջ բազմաթիվ շերտերի գոյության վերաբերյալ։ Վ. Ժիրմոսկին գնահատում է ակադ. Ռիբակովի աշխատանքը բիլինային էպոսի մեջ պոլովցյան շերտի հայտնագործման համար։ Պրոֆ-դոկտոր Ա. Մ. Աստախովան (Հենինգրադ) պաշտպանում է Պրոպպի տեսակները ֆոլկլորի մեջ պատմականության արտացոլման յուրահատկության մասին։ Գնահատելով ակադ. Ռիբակովի աշխատանքը, նա չի ընդունում հեղինակի այն թեզը, թե՛ բիլինան դա ժողովրդի կուլմից երգված պատմությունն է։ Ա. Մ. Աստախովան գտնում է, որ Բ. Ա. Ռիբակովը քննադատական մոտեցում չունի բիլինային նյութի նկատմամբ։

Բանասիրական գիտ. դոկտոր Բ. Ն. Պուտիլովը (Հենինգրադ) քննադատում է ակադ. Ռիբակովի տեսակետը, որը չի համապատասխանում ֆոլկլորի ուսումնասիրության գիտական նպատակներին։ Վ. Պ. Անիկինը (Հենինգրադ), Լ. Ի. Խմելյանովը (Հենինգրադ) գտնում են, որ և՛ պրոֆ. Պրոպպի և՛ ակադ. Ռիբակովի տեսակետները իրար չեն ժխտում, ինդիքը փաստերի գնահատման և հարցադրման ծայրահեղությունների մեջ է։ Սրանք խոսում են նաև էպոսի և մյուս ժանրերի (հեքիաթ) փոխհարաբերության մասին։ Ըր ելույթում պրոֆ. Ն. Կռավցովը (Մոսկվա) քննադատում է Վ. Յա. Պրոպպին այն բանում, որ նա անհարկի արխայիզմ է մտցնում բիլինային էպոսում, դրանով իսկ կտրելով այն կոնկրետ պատմական իրականությունից։ Գտնում է, որ ուսուսական բիլինային էպոսի քննության ժամանակ պետք է օգտագործել սլավոնական ժողովուրդ-

ների նյութերը։ Ա. Չունչիբաձեն (Վրաստան), Պ. Պավլիլյ (Ուկրաինա) գտնում են, որ էպոսի սլավոնականության հարցի քննությանը շատ կարևոր նյութ կարող են տալ մյուս ժողովուրդների էպիկական ստեղծագործությունները։

Պրոֆ. Ա. Պոզդեկներ (Մոսկվա) ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ բիլինաների ուսումնասիրությունը կատարվում է մակերեսայնորեն, անտեսվում է բանահյուսության համար շատ կարևոր պատմի դերը։ Լեռաջ է քաշում բանաստեղծական ստեղծագործության կատարման մոմենտները, սյուժեների հետ կապված անունների և տեղանունների հարցը, որոնք կարևոր են դարաշրջանը որոշելու և բնութագրելու համար։ Այն կարծիքն է հայտնում, որ բիլինաները հորինվել և կատարվել են XIV—XV դարերում և ուղղված են թաթարական արշավանքների դեմ։ Ի. Ելյարտո (Կալինին) խոսում է լեզվա-բարբառային տարրերի ուսումնասիրության պարևորության մասին։

Պրոֆեսորներ՝ Ի. Գուտոբովը (Բելոռուսիա), Բոգոտիրյովը (Մոսկվա), բանասիրական գիտությունների թեկնածուներ Ի. Կուուլյաուովան (Սվերդլովսկ), Է. Պոմերանցեան (Մոսկվա), Վ. Գուսեր (Հենինգրադ), Ի. Մելեխիսովին (Մոսկվա), Վ. Գալկը (Մոսկվա) և ուրիշներ իրենց ելույթները նվիրում են ֆոլկլորի տարրեր ժանրերի փոխհարաբերությանը, ֆոլկլորի մեջ ժողովրդի աշխարհայացքի տարրեր կողմերի դրսևորման, ֆոլկլորային ստեղծագործությունների առաջացման և այլ հարցերի։

Կոնֆերանսում բնթերցվեց նաև պրոֆ. Կ. Մելիք-Օհանյանի (Երևան) ընդարձակ ելույթը, հայկական էպոսի պատմականության հարցերի շուրջը, որն ընդունվեց մեծ հետաքրքրությունով և զուհունակությամբ։ Ելույթ ունեցողներից շատերը հենվեցին հայկական նյութի վրա։

Իրենց պատասխան խոսքում պրոֆ. Վ. Յա. Պրոպպը և ակադ. Բ. Ա. Ռիբակովը բնգունեցին ևղած որոշ դիտողություններ, բայց յուրաքանչյուրը մնաց իր սկզբունքի և համոզմունքի դիրքերում։

Կոնֆերանսը փակելով՝ ՍՍՌԽ ԳԱ թղթակից-անդամ Վ. Բաղանովը հայտնեց, որ գիտական բանավեճը դրանով չի ավարտվում և դեռ շատ անելիքներ կան ֆոլկլորի պատմության ասպարեզում, որ պետք է կատարեն ձեռք-ձեռքի տված մեր ֆոլկլորիստները, պատմաբանները և մյուս մասնագետները։

Ա. ՆԱՂԻՆՅԱՆ